600.0081.03.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2019 թվականի №81Ա
քաղ. Երևան

«ԳԱՄ-ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2004 թվականի ապրիլի 29-ին «ԳԱՄ-ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է №9/1-42 թույլտվությունը, որը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի մարտի 11-ի №101Ա որոշմամբ շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0524 թույլտվություն),

բ) ռադիոհաճախականության օգտագործման №0524 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2019 թվականի մարտի 11-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով, ուստի թույլտվությունը 2019 թվականի մարտի 12-ից համարվում է դադարեցված,

գ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №343Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 498 900 (չորս հարյուր իննսունութ հազար ինը հարյուր) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, որը կատարվել է,

ե) Հանձնաժողովի 2018 թվականի մարտի 7-ի №72Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2018 թվականի մարտի 7-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 228 903 (երկու հարյուր քսանութ հազար ինը հարյուր երեք) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, սակայն մինչ օրս չի փոխանցել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2018 թվականի մարտի 8-ից մինչև 2019 թվականի մարտի 12-ը հաշվարկված 293 351 (երկու հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր հիսունմեկ) դրամ պարտքը, որից 238 889 (երկու հարյուր երեսունութ հազար ութ հարյուր ութսունինը) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 54 448 (հիսունչորս հազար չորս հարյուր քառասունութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
3 ապրիլի 2019թ.